



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԱՍԱՍԲԼԵԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ  
HELSINKI CITIZENS' ASSEMBLY  
VANADZOR OFFICE

2001, Հայաստանի Հանրապետություն,  
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59  
59 Tigran Metsi st.  
Vanadzor, 2001, Republic of Armenia  
Tel. ( հեռ ) (374 322) 4 22 68  
E-mail: hcav@hcav.am

ՀՀ պաշտպանության նախարար  
Սեյրան Օհանյանին

15 փետրվարի, 2010 թ.

Բաց նամակ

Հարգելի պարոն նախարար,

2009 թ-ի հոկտեմբերի 21-ին մեզ է դիմել քաղաքացի Դավար Տոնոյանը /հասցեն՝ Շիրակի մարզ, գյուղ Հոդմիկ/ իր որդու՝ Գրիգոր Հակոբյանի իրավունքների պաշտպանության խնդրանքով:

Գ. Հակոբյանը 2009 թ. ապրիլի 15-ին ծանուցվել է բանակ գորակոչվելու մասին: Նա անցել է տեղական բուժզննություն, որի արդյունքների հիման վրա որոշվել է, որ Գ. Հակոբյանը գորակոչվելու է բանակ 2009 թ-ի մայիսի 17-ին: Սակայն նույն օրը հավաքակայանից նրան ուղարկել են Երևանի օրթոպեդիկ հիվանդանոց հետազոտման նպատակով: Ըստ հետազոտման տվյալների՝ նրա մոտ առկա է ձախ ոտնաթաթի ձևախախտում, ողնաշարի ծուռություն: Հետազոտության եզրակացությունն ստանալուց հետո, այնուամենայնիվ, հունիսի 8-ին Աշոցքի զինկոմիսարիատից Գ. Հակոբյանին գորակոչել են Սիսիան՝ զինված ուժերում ծառայելու:

Հուլիսի 15-ին զինվորը տեղափոխվել է Մեղրի, և մի քանի օր հետո նրա մոտ առաջացել են ուժեղ գլխացավեր, քթի արյունահոսություն, դժվարացել է շնչառությունը: Նրան տեղափոխել են Սիսիանի հոսպիտալ /տիկին Մարգարիտայի միջոցով, որի հավաստմամբ զինվորն անընդհատ բողոքել է գլխացավերից/, չնայած ծնողի հավաստմամբ հրամանատարը հայտնել է, որ զինվորը դիտավորյալ է բողոքում գլխացավերից և քթի արյունահոսությունից՝ մեկ այլ վաշտ տեղափոխվելու պատրվակով:

Սեպտեմբերի 12-ին զինվորին տեղափոխել են Երևանի զինվորական հոսպիտալ, քանի որ Գ. Հակոբյանը բողոքել է ոտքերի թուլությունից, գլխի ու մեջքի ուժեղ ցավերից:

Ծնողի հավաստմամբ, երբ հոկտեմբերի 15-ին նա գնացել է այցելության, նրան հայտնել են, որ որդուն ցանկացել են ուղարկել տուն 10 օր ժամկետով, սակայն վերջինս չի ցանկացել: Իսկ ծնողների այն խնդրանքին, որ այդ օրը իրենց զավակին ուղարկեն տուն, պատասխանել են, որ մեկ շաբաթից նա անցնելու է բուժզննություն: Իսկ այն հարցին, թե այդ տասն օրից հետո տղայի առողջական վիճակը լավանալու է, թե ոչ, պատասխանել են, որ իրենք ոչինչ չեն կարող անել, քանզի տղան կարիք չունի դեղերի կամ բուժման: Նրան գննել է նաև հոգեբանը, սակայն որևէ խնդիր չի հայտնաբերվել:

Հոկտեմբերի 22-ին /ըստ ծնողի/ Գ. Հակոբյանին կրկին ենթարկել են բուժզննության և ըստ եզրակացության, նրա մոտ առկա է քթի միջնապատի ծուռություն, որը խանգարում է շնչառությանը, ոտնաթաթի ձևափոխում, սրտանոթային անբավարարություն, ձախ ուսահողի գերշարժունակություն, որի հետևանքով ցավեր ունի ուսի հատվածում և հետևաբար տեղափոխվել է Երևանի Կանազ հիվանդանոց և նրան հայտնել են, որ պետք է շարունակի ծառայությունը: Հերթական անգամ առողջության վերաբերյալ բուժզննության եզրակացությունը չի տրամադրվել զինվորին կամ նրա ծնողին:

ՀՀ պաշտպանության նախարարի ավագ օգնական-վարչական ապարատի ղեկավար Գ. Հայրապետյանը 2009 թ-ի դեկտեմբերի 16-ի ՊՆ/510-ՎԱ-649 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ 50869 զորամասի զինծառայող շարքային Գրիգոր Հակոբյանը (2009/1 զորակոչ) 25.08.09թ. ընդունվել է Ջանգեզուրի կայագորային հոսպիտալ, որտեղ կատարված հետազոտությունների արդյունքում նրա մոտ ախտորոշվել է Ձախ ուսահողի հետվնասվածքային գերշարժունություն՝ և նա 12.09.09 թ. տեղափոխվել է ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի վնասվածքաբանական բաժանմունք՝ հետագա հետազոտման և բուժման նպատակով:

Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում կատարվել են անհրաժեշտ լաբորատոր գործիքային հետազոտություններ, մասնագետների կոնսուլտացիաներ և 05.11.09 թ. “Սումատոգեն պայմանավորված ասթենոներոտիկ համախտանիշ, ձախ ուսահողի աննշան հետվնասվածքային գերշարժունություն, երկկողմանի սնամեջ ոտնաթաթեր, քայլի չափավոր խանգարումով, քթի միջնապատի թեքում, առանց քթային շնչառության խանգարման, չափավոր արտահայտված ՆՑԴ, սրտային ձև, միտրալ փականի արտանկում 1-ին աստիճանի, միտրալ հետհոսք 1-ին աստիճանի” ախտորոշումով Գ. Հակոբյանը ներկայացվել է Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով փորձաքննության:

Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը զինծառայողին, ՊՆ 378 հրամանի 25դ, 27բ, 39բ, 42գ հոդվածների համաձայն, ճանաչել է պիտանի ոչ շարային ծառայությանը և կայացրել որոշում՝ “Սումատոգեն պայմանավորված ասթենոներոտիկ համախտանիշ” ախտորոշմամբ տեղափոխել ԵԿՀ հոգեբուժական բաժանմունք՝ մասնագիտական հետազոտման և փորձաքննության նպատակով:

11.11.09 թ.- 25.11.09 թ. զինծառայողը համալիր հետազոտման է ենթարկվել ԵԿՀ հոգեբուժական բաժանմունքում:

24.11.09 թ. ներկայացվել է Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի փորձաքննությանը, որի որոշմամբ ճանաչվել է “Հոգեպես առողջ”, պիտանի ոչ շարային ծառայությանը և սահմանվել է բուժծառայության հսկողություն: 25.11.09 թ. զինծառայողն ուղարկվել է զորամաս:

Սակայն մի քանի օր ծառայելուց հետո՝ դեկտեմբերի 18-ին, Գ. Հակոբյանին կրկին տեղափոխել են Երևանի կայագորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունք: Ծնողի հավաստմամբ, իրենք տեղյակ չեն, թե ինչու է իրենց որդին տեղափոխվել հոգեբուժարան, որտեղ, ի դեպ, նա կրկին բողոքել է ձախ թիկունքի և ոտքի շրջանում ցավերից:

2009 թ-ի դեկտեմբերի 22-ին կրկին դիմել էինք Ձեզ՝ խնդրանքով՝ վերստին բուժզննություն կազմակերպելու և երիտասարդի առողջական խնդիրները վերացնելու հարցով և նոր միայն անդրադառնալ նրա՝ զինվորական ծառայության պիտանիության որոշման հարցին:

18.01.2010 ՊՆ/510-ՎԱ-5 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավարը հայտնել է, որ «Գ. Հակոբյանը 18.12.09 թ-ին կրկին ընդունվել է Երևանի կայագորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունք, իսկ նախնական հետազոտումից հետո զինծառայողի մոտ ախտորոշվել է «Տարել է իրավիճակային ռեակցիա, ինքնավնասումներով» և, որ նա գտնվում է հետազոտման և բուժման փուլում: Վերջնական արդյունքների մասին կտեղեկացվի լրացուցիչ»:

Այնուամենայնիվ, մինչ այժմ որևէ էական փոփոխություն չի իրականացվել, քանի որ զինծառայող Գ. Հակոբյանը ներկայումս կրկին գտնվում է Երևանի «Կանազ» հիվանդանոցում, և նրա առողջական հետազոտման եզրակացությունը չի տրվում նրան կամ ծնողներին՝ չնայած նրանց բազմաթիվ խնդրանքների:

Այսպիսով, 2009 թ. սեպտեմբերի 12-ից մինչ օրս, Գ. Հակոբյանը վեց անգամ ենթարկվել է բուժզննության և ներկայումս էլ գտնվում է Երևանի «Կանազ» հիվանդանոցում: Առողջական խնդիրների պատճառով զորամասում նա չի կարողանում իրականացնել զինվորական շարային կամ ոչ շարային ծառայությունը: Անհասկանալի է նաև, թե զինվորի առողջական վիճակի քանի հետազոտում է անհրաժեշտ իրականացնել, որպեսզի ստացվի վերջնական եզրակացություն: Նման վերաբերմունքը քաղաքացու նկատմամբ կարելի է գնահատել հոգատար, բայց բժշկական գնության տևողությունը, բժշկական եզրակացության չտրամադրելը հիմք են տալիս եզրահանգելու, որ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը չի համարձակվում միանշանակ եզրակացություն տալ և Գ. Հակոբյանին ճանաչել ոչ պիտանի ծառայության համար, որի բոլոր հիմքերն առկա են:

Նման վերաբերմունքը բյուրոկրատական բնույթ է ձեռք բերում և ամենևին չի նպաստում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիների վստահության բարձրացմանը:

Սույնով, վերստին դիմում եմ Ձեզ՝ աջակցելու Գ. Հակոբյանի զինվորական ծառայության խնդրին վերջնական լուծում տալու և համապատասխան բժշկական եզրակացությունները քաղաքացուն տրամադրելու հարցում:

Հարգանքներով՝

կազմակերպության ղեկավար



Ա. Սաքունց